

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.2-1)

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների ռազմավարական և կազմակերպման, մասնագիտական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ քաղաքացիական ծառայության առնվազն առաջատար պաշտոնների երկրորդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքայի ծառայության երկրորդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին հինգ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացությունը

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանան 2013 թվականի մարտի 11-ին, ժամը 12:00-ին Պտղունքի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

-դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի(բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին

-արական սեռի զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն իսկականի հետ միասին:

-մեկ լուսանկար 3×4 չափսի

-անձնագրի պատճեն

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի 310-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընգրկված հիվանդությունների բացակայության մասին հայտարարություն:

Մրցույթին մասնակցել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի , Պտղունքի գյուղապետարան` հեռ.(0231)6-35-50 և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏՎ վարչություն(հասցեն` ք. Արմավիր, Աբովյան 71) հեռ. (0237) 6-07-70:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր` ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2013 թ.-ի մարտի 1-ին